ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

ՔՀԿ չափիչ՝ նպաստավոր միջավայրի և ՔՀԿ-ների իրավազորման կողմնացույց

Իրականացման ժամանակահատված: 01.01.2021 - 31.12.2023

ԱԼԳ երկրներ:

Ադրբեջան, Բելառուս, Հայաստան, Մոլդովա, Ուկրաինա, Վրաստան

ԵՄ ներդրում: € 799 999

Իրականացնող կազմակերպություն(ներ):

European Center for Not-for-Profit Law Stichting (Netherlands), Transparency International Anti-Corruption Center (Armenia), MG Consulting LLC

Սոցիալական ցանցերում օգտահաշիվների հղումներ: https://twitter.com/enablingNGOlaw

Նախագծի կայքէջ: csometer.info/

Նախագծի նկարագրություն:

ՔՀԿ չափիչը ուսումնասիրում է Արևելյան գործընկերության երկրներում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ-ների) միջավայրը և ջատագովում դրա բարելավումը: Այս գործիքը չափում է առկա իրավական կարգավորումները և պրակտիկ դրսևորումները քաղաքացիական հասարակության վրա ազդող հիմնական ոլորտներում՝ սկսած միավորումների և հավաքների ազատությունից ու որոշումների կայացմանը մասնակցությունից մինչև ֆինանսավորման մատչելիությունն ու մասնավոր կյանքի իրավունքը:

Հիմնվելով մի շարք չափորոշիչների և ցուցանիշների վրա՝ ՔՀԿ չափիչը գնահատում է երկրների օրենսդրության և գործնական միջավայրի համապատասխանությունը յուրաքանչյուր ոլորտում: ՔՀԿ չափիչի առավելությունը նրանում է, որ այն մշակվել է լայնածավալ խորհրդակցական և համագործակցային գործընթացի միջոցով, տեղական կազմակերպությունների ջանքի արդյունք է և ընդգրկում է այն հարցերը, որոնք իրապես կարևորվել են տվյալ երկրների համատեքստում: Առաջիկա տարիներին գործիքը կվերանայվի՝ ներառելով գնահատման մոդել, որը թույլ կտա ավելի զգայուն համեմատություն իրականացնել ոլորտների, երկրների և տարիների միջև: Այն նաև նոր թեմաներ կընդգրկի, օրինակ՝ արհեստական բանականության կամ թվային տեխնոլոգիաների օգտագործումը, քաղաքացիական խմբերի վրա դրանց ազդեցությունը գնահատելու համար: Մենք ձգտում ենք իրավազորել ՔՀԿ-ների և ակտիվիստների ավելի լայն խմբի՝ ռազմավարություններ փոխանակելու, ՔՀԿ չափիչի միջոցով մոնիտորինգ իրականացնելու և դրա բացահայտումները իրենց երկրներում ջատագովության

Ակնկալվող արդյունքներ:

-Առկա է ՔՀԿ-ների առանցքային խումբ, որն ակտիվորեն օգտագործում է մոնիտորինգի գործիքը և ջատագովություն է իրականացնում քաղաքացիական հասարակության միջավայրի բարելավման ուղղությամբ: Գործիքը կհղկվի այնպես, որ այն նշանակալից ներդրում ունենա ԵՄ և Արևելյան գործընկերության երկրների միջև քաղաքականության երկխոսության գործում:

- ՔՀԿ-ները պարբերաբար վերահսկում են քաղաքացիական հասարակության միջավայրը ազգային և տարածաշրջանային մակարդակներում, հրապարակում են ստացած բացահայտումներն ու առաջարկությունները՝ հիմնվելով մոնիտորինգի գործիքի վրա, որն արդիական է, համապատասխանում է առկա խնդիրներին և օգնում է բացահայտել դրական պրակտիկաները, սպառնալիքները և սահմանափակումները: